-մեջբերման սկիզբ-

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Փարիզ, 17 դեկտեմբերի 2018թ.

Պարոն Վարչապետ, ***Հարգելի Նիկոլ***

Ֆրանսիայի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ դեկտեմբերի 9-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններում Ձեր քաղաքական դաշինքի հաղթանակի առիթով: Ընտրական այդ գործընթացը ցույց տվեց ժողովրդավարական արժեքների և օրինական պետության նկատմամբ ունեցած հայ ժողովրդի նվիրվածությունը:

Օգտվում եմ առիթից ընգծելու համար մեր որակյալ և վաղեմի երկկողմ հարաբերությունները: Կարող եք ապավինել Ֆրանսիայի օժանդակությանը արդյունավետ տնտեսությանը և հայ ժողովրդի բարեկեցությանն ուղղված Ձեր բարեփոխումների կենսագործման համար:

Վստահ եղեք նաև, որ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, Ֆրանսիան շարունակելու է վճռականորեն գործել ի նպաստ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ, արդար և կայուն լուծման:

Վերստին շնորհավորելով Ձեզ և հարգանքներիս գերագույն հավաստիքով՝

Բարեկամորեն

Էմանուել ՄԱԿՐՈՆ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ
Նորին Գերազանցություն Պարոն Նիկոլ Փաշինյանին

-մեջբերման ավարտ-